ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 8 հունիսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Անդրանիկ Գալստյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Անդրանիկ Գալստյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի մայիսի 18-ին)՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 4, 61 և 63, 66, 67, 69, 164 ու 75, 79, 80, 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասը, 385-րդ հոդվածի 1-ին մասը, 397-րդ հդվածի 2-րդ մասը:

Եվ/կամ

ՀՀ Սահմանադրության 3, 61 և 63, 69, 75, 79, 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասն, այնքանով, որքանով չի սահմանում վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալին մեղսագրված արարքը վերաորակող դատական ակտի դեմ բերված բողոքները պարտադիր վարույթ ընդունելու իրավադրույթ»:

2. Դիմողը նշում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկա իրավակարգավորումները վերաքննիչ դատարանին լիազորում են սեփական նախաձեռնությամբ առանց նման պահանջի առկայության վերաորակել արարքը, փոփոխել առաջին ատյանի կողմից կայացված դատավճիռը: Խնդրո առարկա իրավադրույթների գործողության արդյունքում գործով կողմերը, դատավարության մասնակիցները, հանրությունը փոփոխված մեղադրանքի՝ մեղսագրված այլ արարքի, դրանով դատապարտված լինելու մասին տեղեկանում են վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտի տեքստից:

Ըստ դիմողի՝ դատաքննության ընթացքում անձի արարքին տրված իրավական որակումը փոփոխելը և այդ մասին վերջինիս պատշաճ տեղեկացնելը հանդիսանում են արդար դատաքննության իրավունքի բովանդակության մաս կազմող՝ առաջադրված մեղադրանքի դեմ պաշտպանվելու իրավունքի բաղադրատարրեր, հետևաբար, մեղսագրված արարքի իրավական և/կամ փաստական հիմքերի մասին հրապարակված դատական ակտից տեղեկանալու կարգը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին:

Դիմողը գտնում է, որ վերաքննության մոդելի պայմաններում վերաքննիչ դատարանը չպետք է իրավասու լինի դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և սեփական նախաձեռնությամբ ամբաստանյալին առաջա-

դրված մեղադրանքը վերաորակել, այլապես կստացվի, որ Վերաքննիչ ատյանը պարզապես կրկնում է առաջին ատյանի դատարանի գործառույթները:

Դիմողի կարծիքով՝ հանցագործության որակումը փոխելու լիազորությունը գործադիր իշխանությանը ներհատուկ գործառույթ է, օրենսդիրը, արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի լիազորություն նախատեսելով, խախտել է Սահմանադրության 4-րդ հոդվածով հռչակված սկզբունքը:

Ըստ դիմողի՝ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքերում առկա է իրավական բաց այնքանով, որքանով չի սահմանվում վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալին մեղսագրված արարքը վերաորակող դատական ակտի դեմ բերված բողոքները վարույթ ընդունելու իրավադրույթ:

3. Ելնելով Անդրանիկ Գալստյանի դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28, 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործը ենթակա է ընդունման մասամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանը 2014 թվականի նոյեմբերի 4-ի ՍԴՈ-1174 որոշմամբ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե ներկայացված դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում: Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ նշյալ դրույթի մասով անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման:

3.2. Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա են Սահմանադրական դատարանի 11.04.2007 թ. ՍԴՈ-691 և 20.07.2007 թ. ՍԴՈ-709 որոշումները: Միաժամանակ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածն ամբողջությամբ նոր խմբագրությամբ է շարադրվել 23.03.2018 թ. ՀՕ-211-Ն օրենքով:

3.3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի, 397-րդ հդվածի 2-րդ մասի, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ առկա չեն անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր, այն է, մասնավորապես.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,

- դիմողն իրավասու է տվյալ հարցերով դիմելու Սահմանադրական դատարան,

- դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և պահպանել է Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված 6-ամսյա ժամկետը,

- դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածով, 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 69-րդ հոդվածով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Անդրանիկ Գալստյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին, 397-րդ հոդվածի 2-րդ և 414.2-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Անդրանիկ Գալստյանի անհատական դիմումով գործի քննությունը՝ ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, մերժել:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

8 հունիսի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-33